

## ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՎԻՃԱԿ ԿԱԶԱՅԻ ԵՒ ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԷՁ

# ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՕԴՈՒԺԸ ՌՄԲԱԿՈՑԵՑ ՌԱՄԱԼԼԱՆ ԵՒ ԱՅԼ ՔԱՂԱՔՆԵՐ

Պաղեստինեան շրջաններուն մէջ կացութիւնը վատթարացաւ երէկ եւ բախումներուն վերջ տալու ճիգերն ու փորձերը նոր եւ ուժգին հարուած մը ստացան, երբ պաղեստինցի ցուցարարներ իսրայէլացի երկու պինտոր սպաննեցին Ռամալլայի մէջ, որուն իբրեւ հակադարձութիւն իսրայէլեան օդուժը «Քուրա» ուղղաթիռներով ուժեղացուց Ռամալլայի եւ Կապան պատճառելով մարդկային եւ նիւթական ահաւոր վնասներ: Քանդուած են պաղեստինեան ազգային ռատիոկայանը, պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատի կեդրոնատեղին, պաղեստինեան ռատիոկայանուն մը եւ տարբեր կեդրոններ, որոնց ընթացքին արձանագրութեամբ է 17 վիրաւոր: Ռամալլայի մնաց խաւարի մէջ, երբ վնասուած է նաեւ քաղաքին էլեկտրակայանը:



Ռամալլայի մէջ պաղեստինեացի ռմբակոծուած կեդրոններէն մէկը:

Նոյն քանակներն հաւանաբար, պահեստի 2 պինտորներ սխալմամբ Ռամալլայ մտած են, ուր ստեւանգուած են պաղեստինեան ռատիոկայանուն մը: Բանակը աւելցուց, որ կարճատեւ մը է տք, պաղեստինցի ցուցարարներ ներխուժած են ռատիոկայանունը եւ սպաննած՝ երկու պինտորներ: Ականատեսներ յայտնեցին, որ հարիւրաւոր պաղեստինցիներ հաւանաբար զինուորներ կան հոն: Պաղեստինեան ռատիոկայաններ յայտնեց, որ փորձած է ցրուել ամբողջ օդին մէջ կրակելով, սակայն սակայն աւելի ուշ, ժամը 23:00ին, իսրայէլեան ուղղաթիռներ վերստին ուժեղացուցին կապանի եւ Այլոլորդանի տարբեր քաղաքներ:

Իսրայէլեան բանակին մէջ բանբերը հաղորդեց, որ օդուժը այս ուժեղացումներուն կը դիմէ իբրեւ պատասխան՝ Ռամալլայի մէջ սպաննուած իր երկու պինտորներուն:

Պաղեստինեան ռատիոկայանները յայտնեց նաեւ, որ յստակ չէ, թէ իսրայէլացի պինտորները ինչու մտած էին Ռամալլայ:



Արաֆատ կ'այցելէ վիրաւոր մահուկի մը՝ Կապանի մէջ հիւանդանոցը, իսրայէլեան ռմբակոծումներէն ետք:

Նոյն աղբիւրները պինտորները ինչու մտած էին Ռամալլայ: Ծարը՝ էջ 10

## ԵՄԷՆԻ ՄԷՁ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱՐՏԱՆԱԻՈՒ ՄԸ ԴԻՄ ԱՆՁՆԱՍՊՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ՏՈՒՊԱՅ, 12 (ՌՈՅ-ԹԸՐԸ).- Ականուած լաստ մը երէկ բարեցաւ ամերիկեան ծովու զորքի 350 զինուոր փոխադրող մէկ մարտանաւուն, որ խարսխած էր Ատէնի (Եմէն) նաւահանգիստին մէջ եւ պիտի ուղղուէր դէպի Պահլէյն: Պայթուած պատճառով է 5 ամերիկացի զոհ, 36 վիրաւոր եւ 12 կորսուած, յայտնեցին ամերիկեան ծովու զորքի պաշտօնատարները: Ամերիկեան ծովու զորքի հինգերորդ նաւատորմին բանբերը՝ Տարըն Փելթը



«ԵՆ. Էս. Էս. Զոյ» մարտանաւը: Ըստ, որ մարտանաւուն յայտնած է, որ տեսած է վրայ գտնուող բարձրաստիճան զինուորական մը թէ լաստ մը արագօրէն Ծարը՝ էջ 10

## ԻՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԸ՝ ՆԱԽԱԳԱՀԻՆ, ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԵՒ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՄՕՏ

Իրանի արտաքին գործոց նախարար Քամալ խարապի երէկ այցելութիւններ տուաւ հանրապետութեան նախագահ Վոր. Էմիլ Լախուտի, վարչապետ Սեյիմ Հըսի եւ խորհրդարանի նախագահ Նեայիի Պըրրիի, ինչպէս նաեւ հանդիպում մը ունեցաւ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի հետ:

Իրանի արտաքին գործոց նախարար Քամալ խարապի երէկ այցելութիւններ տուաւ հանրապետութեան նախագահ Վոր. Էմիլ Լախուտի, վարչապետ Սեյիմ Հըսի եւ խորհրդարանի նախագահ Նեայիի Պըրրիի, ինչպէս նաեւ հանդիպում մը ունեցաւ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի հետ:

Ներկայացուց վերջին պարագայումները եւ իսրայէլեան վայրագութիւններուն նկատմամբ Լիբանանի կեցւածքը: Խարապի հանդիպումէն ետք յայտարարեց, որ նախագահ Լախուտ յատուկ դեր ունի Լիբանանի ազգային համաբարձրութեան մէջ: Ծարը՝ էջ 2

## ՊԱՐԱՔԻՆ ԿԱՍ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ ՈՉ ՄԷԿ ՊԱՏԳԱՄ ԲԵՐԱԾ ԵՄ

ԸՍՍԻ ԲՈՅԻ ԱՆԱՆ ՆԱԽԱԳԱՅ ԼԱՅՈՒՄԻ ԴԵՏ ՏԵՍԱԿՅՈՒԹԵԱՆ ԱՄՐՈՒՄԻՆ

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան երէկ կէսօրին Պաղեստինի պալատին մէջ հանդիպում մը ունեցաւ հանրապետութեան նախագահ Վոր. Էմիլ Լախուտի հետ: Ներկայ էին նաեւ վարչապետ Սեյիմ Հըսի եւ Լիբանանի մէջ ՄԱԿի ներկայացուցիչ Ռալֆ Բընուիսը: Նախագահ Լախուտ կոչ ուղղեց Անանին՝ աշխատելու իսրայէլեան բանտերու մէջ արգելափակուած լիբանանցիներու ազատ արձակումը ապահովելու ամէնէն արագ միջոցին: Լախուտ նաեւ բողոքեց իսրայէլեան օդուժին կողմէ Լիբանանի օդային սահմանի խախտումներն զէմ, որ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին թիւ 425 որոշումի բացառաւ խախտում է: «Սպառնալից ճիգերով, լիբանանեան եւ սուրիական պետութեանց հաստատումով՝ լիբանանեան հող է», ըստ հանրապետութեան նախագահը: Լախուտ Անանի ուղղութեան յանձնեց, որ պաղեստինեան բռնադատուող շրջաններուն մէջ օրինակ կացութիւնը շատ վտանգաւոր է, որովհետեւ պաղեստինցի փոզովուրդին զէմ թշնամական արարքները ընդհանուր ցասում յառաջացուցած են արաբական աշխարհի տարածքին, հետեւաբար անհրաժեշտ դարձած է անոնց արագ դարմանումը: Ծարը՝ էջ 2

### ՖՈՒԹՊՈԼԻ «ԱՍԻԱ - 2000» ՄՐՑԱՇԱՐՔԸ ՍԿՍԱԻ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԱՐԶԱԿԱՆ ԱՄԱՆԻ ԴԱՇՏԻՆ ՎՐԱՅ

Ֆուտբոլի Ասիոյ 12րդ ախոյեանութիւնը՝ «Ասիա - 2000», որ առաջին անգամ ըլլալով տեղի կ'ունենայ Լիբանանի մէջ, երէկ պաշտօնապէս բացուեցաւ Պէյրութի Մարպական Աւանի դաշտին վրայ՝ Լիբանանի հանրապետութեան նախագահ Վոր. Էմիլ Լախուտի կողմէ: Ներկայ էին պաշտօնական բազմաթիւ անձնաւորութիւններ եւ հիւրեր, տեղացի թէ օտար դիւանագէտներ եւ քաղաքական դէմքեր, նախարարներ, երեսփոխաններ, վարչապետ Սեյիմ Հըսի, ՖԻՖԱի նախագահ Սեյիմ Պէթթըր, ԵՈՒ. Է. Է. Ֆ. Ա.ի նախագահ Լէնհարթ Եոհանսըն, Ասիոյ ֆուտբոլի ֆետերասիոնի նախագահ Սուլթան Ահմէտ Շահ եւ աւելի քան 50 հազար համակիրներ: (Մանրամասնութիւնները տեսնել մարպական էջով):

## Հ. Յ. Գ. ԲԻԻՐՈՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՌՈՒՍԻՈՅ ԵՒ ԻՐԱՆԻ ԴԵՄՊԱՆՆԵՐՈՒՆ

Հ. Յ. Գ. Բիւրոն ներկայացնող պատուիրակութիւն մը, բաղկացած Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանէ, Բիւրոյի անդամներ Վահան Յովհաննիսեանէ եւ Մարիո Նալպանտեանէ, երէկ այցելեց Հայաստանի մէջ ռուսական դեսպանատուն եւ հանդիպում ունեցաւ Ռուսիոյ դեսպան Անատոլի Տրիքովի հետ: Հանդիպումին քննարկուեցան Հայաստան - Ռուսիա ռազմաքաղաքական եւ առեւտրական-տնտեսական յարաբերութիւններուն առնչուող հարցեր: Արժարժուեցան նաեւ Ռուսիոյ հայ համայնքին վերաբերող հարցեր: Ծարը՝ էջ 10

## ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶԵԻԸ՝ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՏԱՆ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏԻՆ

Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան կանոններու յանձնարարութիւնը ջորէքարթի օր վաւերացուց Հայկական Ցեղասպանութեան բանաձեւը (H. Res. 598) եւ զայն յիշեց Ներկայացուցիչներու Տան լիագումար նիստին, առ ի քննարկում եւ քուէարկում: Ներկայացուցիչներու Տանը բանաձեւը պիտի քննարկէր Հիւնդարթի օր: Բանաձեւին քննարկման համար նախատեսուած է մէկ ժամ: Իւրաքանչիւր կողմ թեր եւ զէմ արտայայտելու կէս ժամ առիթ պիտի ունենար: Այնուհետեւ բանաձեւը պիտի դրուէր քուէարկուած: Կանոններու յանձնարարութիւնը նիստին Ներկայացուցիչներու Տան անդամ Ճորճ Ռատանովիչ (Հանրապետական) յայտնեց, որ բանաձեւը չ'առնչուէր Թուրքիոյ ներքին: Ծարը՝ էջ 10

## ՎՐԱՍՏԱՆ ԴԺԳՈՇ՝ ՊԻՇՔԷՔԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԵՆ

Հաւաքական Ապահովութեան Համաձայնագիրի անդամ երկիրներու ղեկավարներու Պիշքէքի վեհաժողովին որդեգրուած որոշումներուն թիֆլիս արձագանգեց բացասականօրէն: Վրաստանի արտաքին գործոց նախարարութեան պաշտօնատար մը յայտարարեց, որ պինտորական միացեալ ստորաբաժանումներու ստեղծման մասին որոշումը կրնայ յանգիլ կողմից հաւասարակշռութեան խախտումին: Ան ըսաւ, որ այս որոշումը չի թոյլատրէր, որ Ռուսիա առարկայական դիրքորոշում որդեգրէ Լեռնային Ղարաբաղի հարցին լուծման ուղղութեամբ: Վեհաժողովին որդեգրուած որոշումը մը համաձայն, Արեւելեան Եւրոպայի ճակատի պաշտպանութիւնը կը ստանձնեն Ռուսիա եւ Պիշքէքի, Անդրկովկասին՝ Ռուսիա եւ Հայաստան, իսկ Կեդրոնական Ասիոյ՝ Ղազախստան, Խորհրդայինստան, Տաճիկստան եւ Ռուսիա: Նշեց, որ Վրաստան եւ Արցախեան մասնակցութիւնը չ'ընդունիր Պիշքէքի վեհաժողովին:

### NEW YORK TIME CAFE & NIGHT CLUB (RIO LENTO)

• Սրճարանը բաց է ամէն օր առաւօտեան ժամը 11:00 սկսեալ

Escape to America, to the streets of New York

• Night Clubը բաց է ամէն Հինգշաբթի, Ուրբաթ եւ Ծառաթ երեկոյնը

HOLLOWEEN SPECIAL

• «Dr. Evil's Haunted House» (Ամերիկեան ռճով պատրաստուած յատուկ ցուցադրակայք)

Բաց է ամէն Հինգշաբթի, Ուրբաթ եւ Ծառաթ օրերը երեկոյնան ժամը 7:30-ն սկսեալ Սակ 1 անձի 5000 Լ.Ո.

Ըացել Լաիր Էլ Զէլա RIO LENTO Ըեռ. 04-915656 04-912626

### ՁԳԵՑԷՔ ՈՐ ՁԵՐ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԵՐԱՁԷ ՁՍԵՈՇ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԵՆ ՄԻՆՉԵՒ 15 ՀՈԿՏԵՄԲԵՐ ԳՆԵՑԷՔ

- Առանց կանխավճարի 12 ամսուան մասնավճարով եւ առանց տոկոսի:
- Առաջին մասնավճար 1 Դեկտ. 2000ին:
- 2000-2001ի Գոր հաւաքածոյ:

Ի 20ՐՈՒ Է ԱԵՒ HOUSETEXT ԿՕՏ

Աճրիլիս 04-403173, Պատար 01-382772, Պորթ Համուս 01-265625, Սարկա 09-836920, Թրիփոլի 08-441248:









# Միջազգային Քաղաքական

## ՄԻՆՈՇԵԻԻՉԵՆ

## ԴԵՊԻ

## ԱՊԱԳԱՅ



Արեւմուտքի թղթակիցները եւ լուսանկարիչները դիտանկրեցին, Միլոշեւիչի պարտութիւնը եւ տապալումը գատորոշելի չէ թաւաշեւյ միւս յեղափոխութիւններէ, որոնք Փրակայէն մինչեւ Մանրիլա տապալած են բունտէրները:

Մակայն այս երեւոյթը այնքան ալ պարզ չէ, որքան որ ալ լրատուական միջոցները զայն շեփորահարեն: Մյուսոտան Միլոշեւիչի տապալումը հասկնալու համար կարեւոր է հասկնալ անոր ստպալման եղանակը: Երեւոյթը մէջ պատահածին ճշմարտութիւնը կը գտնուի հանրութեան գեղապիտականորէն շքեղ արամայի եւ համաձայնութիւններու առաւել աշխարհիկ մանրամասնութիւններու միջեւ տեղ մը: Իրականութեան մէջ վերջին գործօնը աւելի որոշիչ դեր ունեցաւ, քան առաջինը:

Միլոշեւիչի անկման արմատներուն հետքը կարելի է գտնել ամերիկեան եւ բրիտանական կառավարութիւններու յետախարութեան մէջ՝ Քոսովոյի մէջ խաղաղարար գործողութիւններուն ապարդիւն ըլլալուն պատճառով: ՕԹԱՆ անը կացութեան մատնուած է, որմէ ելք չունի: Պեկրատի մէջ ընդդիմութիւնը ձախուղեցաւ, պատակտուեցաւ եւ իրրեւ ՕԹԱՆի գործակալ կորսնցուց իր վարկը:

Սերպերը կը համոզուէին երկու բանով՝ իրենք վաղարարութիւններ չեն գործած եւ իրենք թիրախ դարձած են անարդար ու արակոծման երու: Միլոշեւիչը մեծագոյն շահուղը եղաւ: Բագմաթիւ բաներու մէջ անկարող՝ Միլոշեւիչ գոնէ նուազագոյնը պաշտպանեց ազգային շահերը: Այս լուրին տակ ընդդիմութիւնը յաղթանակի նոյնքան առիթ ունէր, որքան Քուրկիլիկը՝ Համաշխարհային Բ. պատերազմին Նորվեկիան մասնակից դարձնելու (նորվեկացի հրամանատար Քուրկիլիկը, Հիթլերի հետ խորհրդակցարար կազմակերպեց գերմանացիներուն կողմէ Նորվեկիոյ գրաւումը, Ա.):

Միացեալ Նահանգներ հակադրեցին նոր ռազմավարութեամբ: Նոր ռազմավարութիւնը՝ «Վար առնել Միլոշեւիչը՝ ճեպուրի փոխարէն ստեպիլին» սահմանումով, կ'ենթադրէր Միլոշեւիչը հեռացնել իր հետեւորդներէն: Ճեպուրի յա-

ռաջացան, եւ նախքան ընտրութիւնները՝ յայտնի դարձաւ, որ Միլոշեւիչ ինքզինք ձուլողակի մէջ ձգած է:

Միլոշեւիչի կառավարութիւնը, մտերիմները, բանակը եւ ոստիկանութիւնը տրամային բանակի դերակատարներն էին: Միլոշեւիչը պէտք էր մեկուսացուէր ուժի այլ լծակներէն: Հազարաւոր մարդիկ կրնային սպաննուիլ, ինչպէս՝ Ռուս մանիոյ մէջ Չառուշեքոյի տապալման պարագային, եթէ Միլոշեւիչ կառչած մնար ուժի այլ լծակներուն:

Ցուցարարներու հետ ոստիկաններուն ողջագուրումը հաւանաբար այնքան կապ չունէր պահուան յառաջացուցած կիրքերուն եւ յուզումներուն հետ, որքան՝ Քոշիւնիցայի եւ Միլոշեւիչի հետեւորդներուն միջեւ գոյացած համաձայնութիւնը: Այս համաձայնութիւնները յառաջացուցին թէ՛ խաղաղութիւնը եւ թէ՛ յեղափոխութիւնը:

Այս համաձայնութիւնները նաեւ ստեղծեցին յեղափոխութիւնը մը՝ անորոշ ապագայով: Միլոշեւիչը հեռացած է: Շատեր, որոնք կարգին անոր հետեւորդները, կ'ուզեն լրտր մեղքերը Միլոշեւիչի վրայ բեռնել: Պատերազմական ոճիւրներու միջոցաւ յայտնուի պատասխանատուն յստակորէն ըսած է, որ Միլոշեւիչ պէտք է գատուի պատերազմական ոճիւրներու համար, սակայն Քոշիւնիցայ յստակորէն հասկուցած է, որ չ'ուզեր, որ պատավարութիւնը շարունակուի:

Իրրեւ նախագահ՝ ան թերեւս հանդուրժէ Միլոշեւիչի դատավարութիւնը, սակայն շատեր, որոնք հետ ինք եւ Մ. Նահանգներ աշխատած են վերջին ամիսներուն ընթացքին, օրինազանցութեամբ ամբաստանուած են եւ ենթակա՝ դատավարութեան: Նկատի ունենալով, որ Քոշիւնիցայ եւ հաւանաբար Մ. Նահանգներ անոնք իրականակարգ վիճակի համար երաշխիքներ չեն տուած, անոնք կրնան գործակցութիւն չցուցարբերել: Յստակ է, որ անոնք խոստումներ պիտի պահանջեն:

Նոյնքան կարեւոր հարց է Սերպիոյ հողային պահանջները, մասնաւորաբար Քոսովոյի պարագային: Քոշիւնիցայ Քոսովոյին սերպական

հողային պահանջներու յամառ պաշտպանն է: Մ. Նահանգներ ի՞նչ խոստացած են Քոշիւնիցային: Ի՞նչ պիտի ընեն ալպանացիները Արեւմուտքի նոր սիրելի վերաբերեալ:

Քոշիւնիցայ կը մնայ առեղծուած այլ մարդ մը: Արեւմուտքը պիտի ուզէ վայն վերածել վաղաւ Հաւէչի մը: Ան համայնավար չէ, սակայն ազատական այլ չէ: Ան ազդայնական մըն է, որ ինչպէս մնացեալ սերպերը, կասկածամտութեամբ կը մօտենայ Արեւմուտքին:

Կարելի է ըսել, որ Քոշիւնիցայ ներկայ Սերպիոյ մէջ պատկերն է՝ ձանձրացած Միլոշեւիչին, խորապէս կասկածամիտ եւ դժգոհ Արեւմուտքի նկատմամբ եւ ազգայնական: Քոշիւնիցայ ժողովրդավար է, սակայն կը հասկնայ նաեւ Պալքանեան մշակոյթին մաս կազմող անհատապաշտութեան եւ քլաններու բարդ երեւոյթները:

Միլոշեւիչի տապալումը յարմար առիթ ստեղծեց Արեւմուտքի համար, որպէսզի ձեռքբեր լուալ: Սակայն փորձել ձեռքբեր լուալը եւ իրապէս ձեռքբեր լուալը տարբեր բաներ են: Արեւմուտքի ներկայիս կը գտնուի կացութեան մը մէջ, որ պէտք է նրեթապէս եւ քաղաքականապէս գորավիչ կանգնի քաղաքական ղեկավարի մը: Հարցը այն է, որ քաղաքական այլ ղեկավար կը հետապնդէ յստակ շահեր, որոնք բանադրանք կրնան վերածուիլ: Եթէ Արեւմուտքը գորավիչ չկանգնի անոր, անիկա կը կորսնցընէ իր վարկը: Եթէ գորավիչ կանգնի, կրնայ յանդիլ այն նպատակներու հովանաւորութեան, որոնք դէմ ինք նախապէս պատերազմի մէջ մտած է:

Քոսովոյի ալպանացիները ասկէ է, որ պիտի վախնան: Անոնք Քոշիւնիցայն կը նկատեն Արեւմուտքին համար պատուուակ մը՝ ալպանացիները, այնպէս մը, եւս սերպերուն ձեռք ձգելու համար: Ուշադրելով կրնայ յաղթանակ հռչակել եւ տուն վերադառնալ:

Համադրաբար՝  
«ՍԹՐԱԾՖՈՐ»-ԷՆ

# «ՏԻՖԵՆՏՈՐԻ» ՉԷՆՔԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

Համաշխարհային իրավիճակներու վերիվարումները պատճառ կը դառնան, որ երկիրներու կառավարութիւններ տեւարար մտահոգւելի իրենց զինեալ ուժերու վերաորակաւորմամբ եւ այդ նպատակով մեծ գումարներ կը տրամադրեն նորանոր զէնքերու գնումով արդիականացնելու համար իրենց բանակը: Աւելին, պաշտպանութեան նախարարները ամէն առիթով կ'ուսումնասիրեն ու կը տեղեկանան միջազգային ցուցահանդէսներով ծանուցուող նորագոյն ու ժամանակակից զէնքերով:

Այսպիսի ցուցահանդէս մը կը կազմակերպուի երկու տարին անգամ Ցուլնաստանի մէջ, «Տիֆնտորի» անուան տակ, որուն պաշտօնական բացումը տեղի ունեցաւ 3 Հոկտեմբերին, Փիլիպին մէջ: Ցուցահանդէսին կը մասնակցէին 88 երկիրներ, որոնք կարգին՝ Ցուլնաստան, Թուրքիա, Հայաստան, Վրաստան, Սլովակիա, Կիպրոս, Ուքրաինա, Ֆիլիպինեան կղզիներ, Մալուի, իրենց պաշտպանութեան նախարարներով: Ցուցահանդէսին անձամբ ներկայ գտնուեցան Ցուլնաստանի պաշտպանութեան նախարար եւ փոխ նախարար Աբիս Յոխանովուրտ եւ Տիմիթրի Ափոսթոլաքիս, Թուրքիոյ զինեալ ուժերու հրամանատար Սապահէտտին Չաքմաքոլու, Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան, եւ այլն: Իսկ պաշտպանութեան փոխ նախարար-

ներով ներկայ գտնուեցան՝ Ֆրանսա, Անգլիա, Իսրայէլ, Ռուսմանիա, Սլովենիա եւ այլ երկիրներ:

Պաշտպանութեան նախարարներն ու փոխ նախարարները առիթը ունեցան դիտելու 88 երկիրներու 750 գործարաններու արտադրած զէնքերը:

Ցուլնաստանի պաշտպանութեան նախարարութիւնը կը յայտնէ, թէ բազմաթիւ երկու տարի առաջուան նոյն անուան տակ տեղի ունեցած ցուցահանդէսին՝ այս տարուան մասնակցութիւնը 25 տոկոսով աւելցած է:

Ցուլնաստանի 5 յունական օրաթերթի մը «Տիֆնտորի» մասին իր լրատուութեան խորագիրը՝ «Հարսեր, փեսաներ եւ օժիտ» զինարշաւի բեմահարակիւն վրայ:

Ցուցահանդէսի կազմակերպիչ շրջանակներ կը յայտնեն, թէ այս տարի հոն ցուցադրուեցան յատկապէս վերջին տարիներու պատերազմներուն հզատագործուած հրացաններ, ատրճանակներ, օդատարներ, հրթիռարձակներ, ուղղաթիւներու դէմ՝ հրթիռներ, սարքեր: Այլ զէնքերը օգտագործուած են Պարսից ծոցի, Պոսնիոյ, Չեչենիոյ, Սոմալիի, Քոսովոյի մէջ: Ցուցադրուող զէնքերէն մաս մը արդէն ներկայացուած են Լոնտոնի Farnborough, Փարիզի Լը Պուրժէ, Ապրի Տապիի ԻՏԷՔՄ, Պերլինի ԻԼԱ զինուորական ճարտարարուեստի ցուցահանդէսներուն:

Կարեւոր տեղ տրամադրուեցաւ գերմանական «Լեոփարտ 2 Էլ 6» եւ Ֆրանսական «Լըքլէքք», բրիտանական «Չելիկոփթ 2»-ի եւ ամերիկեան «Մի Էլ 2 Ապրիլ» հրասայլերուն: Գերմանական հրասայլը վերջինս ցուցադրուած է նաեւ Թուրքիոյ մէջ ցուցահանդէսին:

Երեւոյթը պատերազմի պատճառով Պալքանեան թերակղզիի երկիրները եւս մեծ շահագործութիւն չցուց կուտան այս ցուցահանդէսին նկատմամբ եւ շօշափելի պիտի չյատկացուցած են զինական ապսպրանքներ կատարելու համար:

Ցուլնաստանի պաշտպանութեան նախարարութեան գնահատմամբ, ցուցահանդէսը մեծ յաջողութիւն արձանագրեց, որովհետեւ տարբեր երկիրներ ինամբով պատրաստուած «տաղաւարներ» հաստատած էին:

Ցուցահանդէսին ներկայացուեցան նաեւ գերմանական, բրիտանական, ֆրանսական իտալական եւ սպանական ճարտարարուեստներու միացեալ արտադրութեամբ հրասայլը, ինչպէս նաեւ նոր օդանաւ մը՝ «Նուրոֆայլը» որուն համար յատուկ հետաքրքրութիւն ցոյց կուտայ Ցուլնաստան:

Ցուլնաստան յատկապէս շահագրգռուած է նոր ու արդիական հրասայլերու գնումով եւ այս նպատակով ալ շուրջ 1,9 միլիար տոյարի գումար յատկացուցած է 250 հրասայլ գնելու հեռանկարով:

## ՕԳՈՍՏՈՍ 2000 ԱՄՍՈՒԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐԸ «ԹՈՉՆՈՑ ԲՈՅՆ»ԻՆ

Արաքսի Թոմասեան, իր երբօր երկրորդ տարեկիցի Գրիգոր Թագեան 10\$, տէր է տիկին Խաչիկ Խաչիկ Կէօքեօգեան 10\$:  
Հռիփսիմէ Նիկողոսեանի մահուան քառասունըփն առիթով եղած են հետեւեալ նուիրատուութիւնները. տէր է տիկին Յակոբ Պըլտեան 100,000 լ.ա., տէր է տիկին Ալեքս Գասպարեան 100,000 լ.ա., Սահակեան ընտանիք 20,000 լ.ա., Ճիգմէտեան Յիշատակի Ձեռնարկ Տնօրէնութիւն 100,000 լ.ա., Սարգիս Պողոսեան

150,000 լ.ա., տէր է տիկին Գրիգոր Թագեան 10\$, տէր է տիկին Խաչիկ Կէօքեօգեան 10\$:  
Տիկին Տիգրա Սարգիսեան (Միացեալ Նահանգներ) Հռիփսիմէ Փանոյեան Գի եւ Սարգիսեանի մահուան յիշատակին առիթով 705\$, տիկին Ալիս Գազանեան, Ուլերայցեւորութեան առիթով 100\$, Պագլայեան ընտանիք 100\$, Դազեան ընտանիք 100\$, տէր է տիկին Վարուժան

Շաղաւճեան 100\$.  
«Արթիւն Շուր» ուխտի առիթով 1 ղշխար, տիկին Գեղարքի Դանիէլեան ուխտի առիթով 1 ղշխար, Շահպազեան Ասպետ ուխտի առիթով 2 ղշխար, Գեորգ Գուլումեան ուխտի առիթով 1 ղշխար, տէր է տիկին Յակոբ Արթիւնեան ուխտի առիթով 1 ղշխար, տէր է տիկին Մանօ Գալայեան ուխտի առիթով 1 ղշխար, տիկին Երան Գիլ եւ Գոհար Հալաւճեան ուխտի առիթով 1 ղշխար,

# ՊԵԼԿՐԱՏԻ ԵՒ ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ՄԻՋԵՒ ԶԻՆՀԱԼԸ ԿՐՆԱՅ ԱՐՄԱՏԱԿԱՆԱՅՆԵԼ ՔՈՍՈՎՈՆ

Արեւմուտքի եւ Պեկրատի միջեւ յարաբերութիւններու բարելաւման հետաճկարները ցնցած են Քոսովոյի ալպանացիները եւ կրնան արմատակացացել աճուցանակախոթեան ձգտումը:

Ալպանացի ղեկավարներ չղայնութեամբ լայնացեցին, որ երկուսուսուսու ճորճարի անխաղաղ Քոշիւնիցայ որեւէ տարրերու չ'ուզէ իր անխորհրդէ՛ Միլոշեւիչին:

«Եթէ միջազգային հանրութիւնը Քոշիւնիցայի հետ յարաբերութիւններու սէջ չափազանցութեան երթայ, այստեղ կան մարդիկ, որոնք պիտի սկսին անխաղաղաբար ստուիլ յաջորդ պատերազմին», ըսաւ Միջազգային Տագնապներու խմբակին տնօրէն Լուիս Սէլ: «Չկայ ալպանացի մը, որ անկախութիւն չ'ուզէր», աւելցուց ան: Քոսովո միջազգային ընտանիքի տնօրինութեան տակ կը գտնուի ՕԹԱՆի նմալոծումներէն ի վեր: Արեւմուտքը կը պնդէ, որ Քոսովո կը սնայ Սերպիոյ՝ երկուսուսուսու գերիշխող հանրապետութեան, սէլ բաժնը:

Երբ Միլոշեւիչ անխաղաղ էր, Քոսովոյի ապագայ կարգավիճակի մասին Պեկրատի հետ բանակցիլը անկարելի էր Արեւմուտքի համար: Ներկայիս դէտեր կ'ընեն, որ Քոշիւնիցայ եւ Արեւմուտք աւելի լաւ յարաբերութիւններ կրնան մշակել, հետաճկար մը, որ կը ստահոգէ ալպանացիները:

«Պատահական չէ, որ (Քոշիւնիցայի ընտրութեան ի վեր) ալպանացիները այսքան մասնոյ հաղորդագրութիւններ կը հրապարակէ՛ իրենց անկախութեան մասին արտալայտուելով», կ'ըսէ արեւմուտքի դիւանագետ սը Փրիշթինայի մէջ: «Անոնք չեն կրնար ապագան պատկերացնել երկուսուսուսու հետ», կ'ըսէ ան:

Առաջին փորձաքարը կրնայ 28 Հոկտեմբերը ըլլալ, երբ Քոսովոյի սէջ տեղի պիտի ունենան քաղաքապետական ընտրութիւններ: Ասիկա առաջին քայլն է Արեւմուտքի ծրագրի մէջ տեղական ինքնակառավարման մարմին մը ստեղծելու ուղղութեամբ:

Նամալոծակ ընտրութիւններ ընդհանրապէս կը վերաբերին տեղական այնպիսի մտահոգութիւններու, ինչպէս՝ աղբերու հաւաքումը, սակայն մասնակից բոլոր կուսակցութիւնները իրենց ընտրապայքարը սկսած են Քոսովոյի անկախութեան մասին խոստումներ տալով:

Այս իմաստով, իբրեւ անկախութեան հանրաքուէ, անկախ արդէն իսկ յաղթած է: Սակայն դէտեր պիտի ստուգեն, թէ արդէօք քուէներուն սեծամասնութիւնը արմատական կուսակցութիւնները պիտի շահին:

«Անկախութիւնը շատ կարեւոր հարց է եւ ճիշդ է, որ ճշուի», կ'ըսէ ժողովրդավարական կուսակցութեան նախագահ եւ Քոսովոյի Ազատագրութեան բանակի նախկին առաջնորդ Հիշամ Թաշի:

Իրաքանչիւր ալպանացիի, որուն ես հանդիպած եմ, չափաւորական կամ ոչ, անկախութիւն կ'ուզէ: Հետեւաբար Քոսովոյի վերջնական կարգավիճակի հարցը երկայնի լուծելը կրնայ նոր տագնապներու առաջնորդել, երոպական Միութեան արտաքին գործոց նախարարներուն հետ հանդիպումի մը ընթացքին յայտնեց Քոսովոյի հարցերով զիջաւոր բանագնաց Պեռնար Քոշիւնի:

«Ռոյթըր»

1 հատ մեծ օրօրոց եւ սահակի մասնակցութիւն, Պուրճ Համուտի Զաղաքապետարան 6 սնտուկ լոյկի, 2 սնտուկ խնձոր, 1 սնտուկ վարունգ, 4 սնտուկ սպէր, 3 սնտուկ դրում, 3 սնտուկ խաղող, 1 սնտուկ տանձ, գեր2. Տ. Եփրեմ արք. Թապագեան 6 հատ սեղան, Պուրճ Համուտի Զաղաքապետարան 11 հատ ձմեռուկ, 4 սնտուկ խաղող, 6 տոպրակ թուղթ թաշկի-ճակ, 3 տոպրակ թուալէթի թուղթ:

**al-mashrek**  
INSURANCE & REINSURANCE S.A.L.  
Պուրճ Համուտի մասնաճիւղի հեռաձայնի թիւերն են.  
**(01)258228 – (01)268808**  
Fax: (01) 258223

# ՅՈՅՄԻ ՃԱՄԲԱՆ

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ԻՆՅԵՐՆԵՐԻ ԵՒ ԲԵՄԻ ԿՐԱՅ, ՄԻՆՉ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՆԱՏՈՒՆ ԿԸ ԸՆՆԱՐԿՈՒԻ ՈՐԱԿԻ ԸՆԴՅՈՒ

Ներկայ ժամանակներուն բանաստեղծութիւն կարողացող կը թուի, թէ կը կարող այնքա՛ն գրական այս սեռին թաղմանակալն: Վերջերս հրատարակուած «ՔԼԵՒ Փոփ Մեթրո» վերնագիրով գիրքի մը մէջ ամերիկացի բանաստեղծուհի Տանա Ճիփա ցաւ կը յայտնէր, որ միայն համալսարաններու մէջ բանաստեղծութիւն կը կարողացուէր: Ան իրրեւ դարձան կ'առաջարկէր վանկերու եւ յանգրու օրէնքները յարգել: Գիրքին խմբագիրը պարզապէս հարց կու տար՝ «ո՞վ սպաննեց բանաստեղծութիւնը»:

Սակայն մինչ նման մտաւորականներ կ'ողբային բանաստեղծութեան մուսլ ճակատագիրը, Ատալանտիդի երկու կողմը բանաստեղծներ սկսած էին գտնել ընթերցողները բանաստեղծութեան հաճոյքներուն վերադարձնելու միջոցներ: Նոյնիսկ կը խօսուէր «բանաստեղծութեան նոր ծաղկում» մը մասին:

«Բանաստեղծութիւնը երբեք չի մեռնիր», կ'ըսէ աստորալիացի բանաստեղծ Լէ Միւրէյ: «Անիկ պարզապէս նոր բնակավայրեր կը գտնէ իրեն համար: Բանաստեղծութեան ծաղկում արձանագրուած է, թէ ոչ, յստակ չէ. բաց անիկ պատճ է նոր բնակավայրեր՝ հրապարակային ընթերցումներու եւ Ինթրնէթի աշխարհին մէջ»:

Միւրէյ հիւրերէն մէկն էր Բանաստեղծութեան Միջազգային փառատօնին, որուն բացումը կատարուեցաւ անցեալ Ուրբաթ, Լոնտոնի մէջ, Բրիտանիոյ Բանաստեղծութեան Ազգային օրուան յաջորդ օրը: Աշխարհի տարբեր կողմերէն 40 բանաստեղծներ հաւաքուեցան Լոնտոն, մէկ շարքով մէկն օր բանաստեղծութիւններ ընթերցելու եւ զրոյցներ կատարելու համար: Ծարձակներ առավ փառատօնին տոմսերուն մեծ մասը արդէն սպասած էր: «Հրապարակային ընթերցումները բանաստեղծութեան գոյատեւումին միակ իրական յոյան են ներկայիս: Ծատակներ մեծ թիւով մարդիկ կը նախընտրեն ընթերցումը մեր ներկայ ըլլալ, քան թէ բանաստեղծութեան գիրք մը գնել», կ'ըսէ Միւրէյ:

Բրիտանացի բանաստեղծ Ջօ Շեփըթ, որ մասնակցեցաւ Բանաստեղծութեան Միջազգային փառատօնին, կ'ըսէ, թէ ժողովրդային խաւէն մարդիկ, եւ ոչ միայն ուսանողներ կամ ակադեմիականներ ստուար թիւով ներկայ կ'ըլլան հրապարակային ընթերցումներու: «Կարեւոր չէ, թէ առիթը Բանաստեղծութեան Միջազգային փառատօնին նման մակարդակաւոր իրադարձութիւն մըն է, կամ ալ բանաստեղծի մը ինքն թաղային գրագրարանի մը մէջ», կը բացատրէ ան:

Բրիտանիոյ դպիներէն բանաստեղծը էնտրու Մոշըն, որ անցեալ տարի նշանակուեցաւ այս պաշտօնին, շատ մեծ կը նկատէ բանաստեղծութեան ուսումը: «Անկարելի է բանաստեղծութեան գտած լայն ընդունելութեան վերաբերող կարծիքները անջատել այն իրականութենէն, որ Բրիտանիոյ մէջ ունինք իր այլազանութեամբ հպարտ մշակոյթ մը: Բրիտանիոյ մէջ այլեւ չենք խօսիլ կեդրոնացեալ, հեղինակաւոր հաստատութեան մը լեզուին մասին կամ անոր շրջափոխին մէջ ծնունդ առած բանաստեղծութեան մասին, այլ կը խօսինք բանաստեղծութեան տեսակներու մասին», կը բացատրէ ան: Եթէ Մոշըն այսպէս կը մտածէ, ապա ասիական մասն է, թէ իրերը որքան փոքուած են: 1970ական եւ 1980ական տարիներուն ան իրրեւ ազդեցիկ խմբագիր մաս կը կազմէր Օքսֆորտի համալսարանին վկայուած բանաստեղծներու խումբի մը, որ ամուր կատանէ մը հաստատած էր թերթիութեան դարապահին առջեւ:

Բրիտանիոյ մէջ այս փոփոխութիւնը մասամբ արդիւնք է ազգային վիճակահանութենէն գոյացած եկամտաւորի եւ իրականութիւնը դարձած է շնորհիւ Բանաստեղծներու միութեան եւ Արեւմտեան խորհուրդին նման կազմակերպութիւններու նախաձեռնութիւններուն: Միացեալ Նահանգներու տարածքին գլխաւորաբար անհաստներ են այս փոփոխութեան նախաձեռնողները: Ամերիկացի բանաստեղծ ձոն Էշպըրի 1997էն ի վեր Միացեալ Նահանգներու դպիներէն բանաստեղծ Ռապըթ Փինքլի մասին խօսելով կ'ըսէ: «Դպիներէն բանաստեղծի իր ժամանակաշրջանին ան բանաստեղծութիւնը շատ աւելի ուշագրաւ դարձուց: Հրատարակեց ժողովուրդին նախադրած բանաստեղծութիւնները: Եւ ծաղկաբառ, երկրներու ունեցած պատկերներու ծաղկաբառ, երկրներու ունեցած պատկերներու միջոցով եւ շրջապատները կատարեց բանաստեղծութիւնը մատչելի դարձնելով հանրութեան»:

Էշպըրի, որ այս տարուան Բանաստեղծութեան Միջազգային փառատօնին հրաւիրուած ամէնէն հուշակաւոր բանաստեղծներէն էր, կը կողմնանայ բանաստեղծութեան վերածաղկունման շուրջ տիրող խանդավառութենէն: «Ձեռնկարներ, որ արդէն աստիղներ մտահոգութիւն որբէ պատճառ ունին: Սակայն կ'ենթադրեմ, որ բանաստեղծութիւնը աւելի յարգարժան ճարտարաբանութեան մըն է, քան ինչ որ էր տասնամեակի մը առաջ», կ'ըսէ ան: Էշպըրի պատճ է Էնուրբը գանապան երգակցութիւններուն յանգրի մեկնելով գոյութիւն ունեցող բանաստեղծութիւններու քանակէն: «Ասիական տեսակ մը գուցա հեռու աշխարհի մըն է կամ յարաբանաստեղծները իրենք զուրու չեն գար այլ աշխարհի, կ'ըսէ ան: Նշելով, որ Բանաստեղծութեան Միջազգային փառատօնին մասնակցողներէն ոմանք շատ աւելի մեծ թիւով ընթերցողներ ունին, որոնք անպայման բանաստեղծութեան հաւատարիմ երկրպագուներ կրնան ըլլալ»:

Լոնտոնի փառատօնին մասնակցող բանաստեղծներէն մէկը՝ Շերին Օւսման կ'ըսէ, թէ բանաստեղծութեան վերակենդանացումին պատճառներէն մէկը մարդուն բանաստեղծութիւնը 15 տարիէն ի վեր իրրեւ դարձանումի միջոց կը գործածուի Նիւ Եորքի հիւանդանոցներուն,

բանտերուն եւ երկրորդական վարժարաններուն մէջ: «Բանաստեղծութիւնը՝ իրրեւ իրականութիւնը հասկանալու եւ իրականութեան հետ ապրելու միջոց», կը բացատրէ ան:

Մինչ բանաստեղծութիւնը կը ճեղքէ իր փակ շրջագիծը, ինթրնէթը բանալի դեր ունի անոր տարածումին մէջ: «Բանաստեղծութիւնը ու ինթրնէթը իրարու համար ստեղծուած են, այնպէս՝ ինչպէս բանաստեղծութիւնը ու ճանասփիւռը, կ'ըսէ էնտրու Մոշըն: «Ինթրնէթն ու ճանասփիւռը կ'ընձեռն են մտերմութեան եւ հրապարակային խօսքի տարօրինակ համադրում մը, որ նոյնիսկ բանաստեղծութիւնը ու ճանասփիւռը իրարու համար ստեղծուած են»:

«Ինթրնէթի բանաստեղծութիւնը շատ յատկանշական եւ հիանալի կերպով փոխակերպելու կարողութիւն ունի, - կ'ըսէ Լէ Միւրէյ, - մարդիկ ինթրնէթի վրայ կրնան միաժամանակ բանաստեղծութիւն կարդալ եւ լսել»: «Ալթրնէթի Մեթրո» ինքն ինքու պարզապէս Փոփ Մեթրոն է: «Ինթրնէթը նման ընթերցումներ կ'ընձեռնէ: Էնտրու Մոշըն իրրեւ դպիներէն բանաստեղծ աշխարհի մեծ ձեռնարկած է բանաստեղծութեան համակարգչային արխիւ մը պատրաստելու գործին: Ան կը յուսայ մինչեւ երկու տարի ինթրնէթի վրայ ճանապարհ աշխարհի տարբեր կողմերէն 500 բանաստեղծներու գործերուն ընթերցումները»:

Շեփըթ Օւսման կ'ըսէ, թէ ինթրնէթը բանաստեղծութիւնը կը փոխակերպէ նաեւ համակարգչային հաղորդակցութեան ճամբով: «Բանաստեղծները միշտ իրարու թով եկած են իրենց բանաստեղծութիւնները կարդալու եւ գրուելու համար: Ուրեմն ընդ 30 մոնտ պիտի քալէր նման հանդիպումի մը համար: Այժմ բանաստեղծներու իմ խումբին մէջ կը գտնենք մարդիկ Աւստրալիայէն, Ամերիկայէն եւ Հնդկաստանէն: Հաղորդակցութեան մեր միջոցը յի - մէ. ինչ է», կը բացատրէ ան:

Կը թուի, թէ բանաստեղծութիւնը նոր խաբուսի մը կը ստեղծէ իրեն համար: Սակայն բանաստեղծները խորապէս տարակարծիք են, թէ ստեղծուած խանդավառութիւնը արդիւնք է լաւուրակ նոր բանաստեղծութիւններու յայտնութեան: Բրիտանական «Փի. Էլ. Ռիվիլ» գրական ազդեցիկ թերթին խմբագիրը՝ Մայքլ Շմիթ անտեղի կը գտնէ բանաստեղծութեան ծաղկում մի մասին խօսելը եւ կը նշէ, թէ բանաստեղծական գործերու վերաբերող քննադատական յօդուածները հետզհետէ ճղճմ կը դառնան: Էնտրու Մոշըն դիտել կու տայ, թէ բանաստեղծութեան տարածումը մեծ փոփոխութիւն չէ յառաջացուած բանաստեղծական գիրքերու վաճառքին մէջ: Անցեալ տարի Օքսֆորտ համալսարանին հրատարակչատան պատասխանատուները տիրահաշիկ որոշում մը կայացուցին եւ հրատարակելի գիրքերու ցանկէն ամբողջութեամբ ջնջեցին բանաստեղծութեան բաժինը:

Բրիտանիոյ մէջ բանաստեղծներու «ըրյներ» տարածուած են ամէնէն անհաւանական վայրերու, ինչպէս՝ կենդանաբանական պարտէզներու, Փոլեթալի ակումբներու եւ թաթուի կրպակներու մէջ, ինչ որ կը ստեղծէ այն մտավախութիւնը, թէ բանաստեղծութիւնը տեսակ մը կրկնէսի սկսած է վերածուել: Ոմանք կը մտածեն, թէ ինչ որ կը բարձրացնէ բանաստեղծութեան հրապարակային պատմութիւնը, որչունելի է: Ուրիշներ մտահոգ են, որ բանաստեղծութիւնը կը վնասուի, երբ լուսարձակները կը կեդրոնանան բանաստեղծներու եւ ոչ թէ բանաստեղծութեան վրայ:

Այս երկու մտայնութիւնները բանավէճի նիւթ դարձան Բանաստեղծութեան Միջազգային փառատօնին: Բրիտանացի բանաստեղծ Լեւինա Կրիլին, որ մասնակցեցաւ վէճին, կ'ըսէ, թէ սխալ է բանաստեղծութիւնը տարածել իրրեւ «վայրկեանապէս մատչելի եւ անմիջապէս կիրարկելի լինելու մըն է մէկուն կենսաբան մէջ»: Բանաստեղծութեան նկատմամբ հետաքրքրութիւն արթնացնելու աւելի լաւ միջոց մըն է ընդունելի, թէ «բանաստեղծութիւնը չի նմանիր որբէ այլ բանի, հարկ է ժամանակ յատկացնել եւ կարդալ գայն, խորհրդածել անոր մասին եւ պահ կենալ անոր դիմաց»:

«Բանաստեղծութեան համար 20րդ դարու սկզբը շատ աւելի լաւ ժամանակ մըն էր, քան դարավերջը: Կը կարծեմ, որ արդիապաշտներուն կատարած նորարարութիւնները անկողմ, հօր եւ տեսական էին: Անոնց գործերը էպոր Փառնետի, Ուայլէյս Միլերընի կամ Մարիան Մուրի բանաստեղծութիւնները կարդալով կը զգանք, թէ անոնք շատ աւելի թաղմը շուրջ կը պարունակեն, քան ինչ որ կ'արտադրուի այս օրերուն», կ'ըսէ Կրիլին:

